Ներդիր թերթիկ՝ տեղեկություններ պացիենտի համար
Տետրակային
10 մգ/մլ (1 %), ակնակաթիլներ
Տետրակային

1Նախքան դեղն ընդունելն ամբողջությամբ կարդացեք ներդիր թերթիկը, քանի որ այն պարունակում է Ձեզ համար կարևոր տեղեկություններ:

· Պահպանեք ներդիր թերթիկը: Հնարավոր է, որ Դուք ցանկանաք ևս մեկ անգամ ընթերցել այն:
· Եթե Ձեզ մոտ ծագել են լրացուցիչ հարցեր, դիմեք բուժող բժշկին կամ դեղատան աշխատողին:
· Դեղը նշանակված է հենց Ձեզ համար: Մի փոխանցեք այն այլ մարդկանց: Այն կարող է վնասել նրանց, նույնիսկ եթե նրանց հիվանդության ախտանիշները համընկնում են Ձեր ախտանիշների հետ:
· Եթե Ձեզ մոտ առաջացել է որևէ անցանկալի ռեակցիա, ապա դիմեք բուժող բժշկին կամ դեղատան աշխատողին: Տվյալ ուղեցույցը տարածվում է ցանկացած հնարավոր անցանկալի ռեակցիայի վրա, այդ թվում՝ ներդիր թերթիկի 4-րդ բաժնում չթվարկվածների վրա:

ՆԵՐԴԻՐ ԹԵՐԹԻԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Ինչ է Տետրակային դեղը և ինչի համար է այն օգտագործվում
2. Ինչ պետք է իմանալ Տետրակային դեղը կիրառելուց առաջ
3. Տետրակային դեղի կիրառումը
4. Հնարավոր անցանկալի ռեակցիաները
5. Տետրակային դեղի պահպանումը
6. Փաթեթվածքի պարունակությունը և այլ տեղեկություններ

1. ԻՆՉ Է ՏԵՏՐԱԿԱՅԻՆ ԴԵՂԸ ԵՎ ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Է ԱՅՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ

Տետրակային դեղը տեղային անզգայացնող միջոց է: Օգտագործվում է աչքի կարճատև ցավազրկման (թմրեցման) համար: Ձեր բժիշկը կարող է օգտագործել այն՝ աչքի զննման կամ բուժման ժամանակ ցավը մեղմացնելու համար:
Չպետք է կիրառել դեղը անհաս երեխաների մոտ:

2. ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՏԵՏՐԱԿԱՅԻՆ ԴԵՂԸ ԿԻՐԱՌԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Չկիրառել Տետրակային դեղը՝

· եթե Դուք ունեք գերզգայունություն (ալերգիա) Տետրակայինի, նույն խմբի այլ տեղային անզգայացնողների կամ դեղի ցանկացած այլ բաղադրիչի հանդեպ (տե՛ս 6-րդ բաժինը):
· եթե Դուք ընդունում եք «սուլֆանիլամիդներ» կոչվող դեղամիջոցներ, որոնք օգտագործվում են բակտերիալ վարակների կամ շաքարային դիաբետի բուժման համար:
· անհաս երեխաների մոտ:

Եթե վերը թվարկվածներից որևէ մեկը վերաբերում է Ձեզ, ապա խորհրդակցեք բժշկի հետ:

Հատուկ ցուցումներն ու նախազգուշական միջոցները

Տետրակային դեղը նախատեսված չէ երկարատև օգտագործման համար: Աչքի մեջ տեղային անզգայացնողի հաճախակի կիրառումը կարող է լուրջ անբարենպաստ ազդեցություն ունենալ Ձեր տեսողության վրա:

<u>Հպումային ոսպնյակներ</u>

Եթե Դուք կրում եք հպումային ոսպնյակներ, Ձեր բժիշկը խորհուրդ կտա Ձեզ հանել դրանք կաթեցումից առաջ և կրկին դնել, երբ դեղի ազդեցությունը լիովին անցնի:

<u>Բենզալկոնիումի քլորիդ</u>

Տետրակային դեղը պարունակում է կոնսերվանտ՝ բենզալկոնիումի քլորիդ, որը կարող է կլանվել փափուկ հպումային ոսպնյակների կողմից և առաջացնել դրանց գույնի փոփոխություն:
Բենզալկոնիումի քլորիդը նաև կարող է առաջացնել աչքերի գրգռվածություն, հատկապես եթե Դուք ունեք աչքերի չորություն կամ եղջերաթաղանթի հիվանդություններ:

Այլ դեղեր և Տետրակային դեղը

Տեղեկացրեք բուժող բժշկին կամ դեղատան աշխատողին, եթե ընդունում եք, վերջերս ընդունել եք կամ կարող եք սկսել ընդունել որևէ այլ դեղ, այդ թվում՝ առանց դեղատոմսի բաց թողնվող:
Չպետք է կիրառել Տետրակայինը սուլֆանիլամիդներ ստացող պացիենտների մոտ:

Հղիությունը և կրծքով կերակրելը

Եթե Դուք հղի եք կամ կերակրում եք կրծքով, կարծում եք, որ հղիացել եք, կամ պլանավորում եք հղիանալ, ապա տեղեկացրեք այդ մասին Ձեր բժշկին: Ձեր բժիշկը կորոշի՝ արդյոք Դուք կարող եք օգտագործել տվյալ դեղը կամ այն կփոխարինի մեկ ուրիշ այլընտրանքային դեղամիջոցով:

Տրանսպորտային միջոցը կառավարելը և մեխանիզմների հետ աշխատելը

Տետրակային դեղը կիրառելուց հետո Ձեզ մոտ կարող է առաջանալ տեսողության ժամանակավոր մշուշոտություն: Մի կառավարեք տրանսպորտային միջոցներ կամ մեխանիզմներ այնքան ժամանակ, քանի դեռ նմանատիպ ախտանիշները չեն անհետացել:

3. ՏԵՏՐԱԿԱՅԻՆ ԴԵՂԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Բժիշկն օգտագործում է այս ակնակաթիլները Ձեր աչքերը զննելու համար:

Դեղի ցուցվող դեղաչափը՝ 1 կաթիլ աչքերից մեկի կամ երկուսի մեջ:
Անհրաժեշտության դեպքում Ձեր բժիշկը խորհուրդ կտա օգտագործել մեկ կաթիլից ավելի:
Ձեր բժիշկը կամ բուժքույրը կկաթեցնի կաթիլները Ձեր աչք(եր)ի մեջ:
Դեպի քթի խոռոչ և կոկորդ դեղի արտահոսքի նվազեցման համար բժիշկը կամ բուժքույրը Ձեզ խորհուրդ կտան 3 րոպեի ընթացքում մատով զգուշորեն սեղմել աչքի

ներսի անկյունը, ինչը հատկապես կարևոր է երեխաների, տարեց մարդկանց և ռիսկի խմբում գտնվող պացիենտների համար:
Դուք կզգաք աչքի թմրածություն (կաթիլների քանակից կախված): Մի դիպչեք աչքերին մինչև դեղի ազդեցությունը չավարտվի:
Ձեր բժիշկը կհոգա այն մասին, որպեսզի Ձեր աչքերը պաշտպանված լինեն ինչպես հարկն է:

Եթե Դուք կիրառել եք Տետրակայինի դեղը պետք եղածից ավելի

Գերդոզավորումը քիչ հավանական է: Եթե կաթեցումից հետո Ձեզ վատ զգաք, հայտնեք այդ մասին Ձեր բժշկին կամ բուժքրոջը, կամ անհապաղ դիմեք մոտակա անհետաձգելի օգնության բաժանմունք:

4. ՀՆԱՐԱՎՈՐ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՌԵԱԿՑԻԱՆԵՐԸ

Ինչպես բոլոր դեղամիջոցները, տվյալ դեղը կարող է առաջացնել անցանկալի ռեակցիաներ, սակայն դրանք առաջանում են ոչ բոլոր պացիենտների մոտ:
Դեղը կաթեցնելիս կարող է առաջացնել ժամանակավոր այրոցի զգացում, Ձեր տեսողությունը կարող է դառնալ ոչ հստակ:
Երբեմն դեղի կարճաժամկետ կիրառումից հետո աչքերի շուրջ գտնվող մաշկը կարող է բորբոքվել, նաև կարող է դիտվել եղջերաթաղանթի մակերեսային արատ կամ այտուց: Եթե Ձեզ մոտ հայտնվի քոր, անհարմարություն, ցավոտություն աչքերի շուրջ կամ տեսողության պղտորում, ապա Դուք պետք է հայտնեք այդ մասին Ձեր բժշկին կամ բուժքրոջը:
Ցավազրկող ակնակաթիլների երկարատև ներմուծման դեպքում հնարավոր է զարգանա եղջերաթաղանթի վնասվածք:
Եթե կողմնակի ազդեցություններից որևէ մեկը դառնում է լուրջ, անհապաղ դիմեք բժշկական օգնության: Եթե Ձեզ մոտ ծագել է որևէ կողմնակի ազդեցություն, որը նշված չէ տվյալ ներդիր թերթիկում, ապա հայտնեք այդ մասին Ձեր բժշկին կամ բուժքրոջը:

Անցանկալի ռեակցիաների մասին հաղորդելը

Եթե Ձեզ մոտ առաջանում է որևէ անցանկալի ռեակցիա, ապա խորհրդակցեք բուժող բժշկի կամ դեղատան աշխատողի հետ: Տվյալ ուղեցույցը տարածվում է ցանկացած հնարավոր անցանկալի ռեակցիայի վրա, այդ թվում ներդիր թերթիկում չթվարկվածների վրա: Անցանկալի ռեակցիաների մասին Դուք կարող եք նաև հաղորդել անմիջապես Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների հաղորդակցության համակարգի միջոցով:
Հայաստանի Հանրապետություն
«Լիկվոր» ՓԲԸ
0089, Երևան, Քոչինյան 7/9
Հեռ.՝ (374 93) 47 74 68, (374 15) 37 88 03
Էլ. փոստ՝ a.bazeyan@liqvor.com

5. ՏԵՏՐԱԿԱՅԻՆ ԴԵՂԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Պահպանեք 25°C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում: Պահպանեք երեխաների համար անհասանելի վայրում:
Մի օգտագործեք դեղը սրվակի և տուփի վրա «պիտանի է մինչև»-ից հետո նշված պիտանիության ժամկետը (պահպանման ժամկետը) լրանալուց հետո: Պիտանիության ժամկետի լրանալու ամսաթիվը փաթեթվածքի վրա նշված ամսվա վերջին օրն է:
Բացելուց հետո սրվակի պարունակությունը օգտագործեք 1 ամսվա ընթացքում:
Դեղերը մի նետեք (մի թափեք) կոյուղու (ջրմուղի) մեջ: Ճշտեք դեղատան աշխատողից՝ ինչպես ազատվել այն դեղերից, որոնք այլևս պետք չեն: Այդ միջոցները թույլ կտան պաշտպանել շրջակա միջավայրը:

6. ՓԱԹԵԹՎԱԾՔԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դեղի յուրաքանչյուր միլիլիտր պարունակում է *ակտիվ նյութ*՝ Տետրակայինի հիդրոքլորիդ՝ 10 մգ:
Օժանդակ նյութեր. բենզալկոնիումի քլորիդ՝ 0,05 մգ/մլ, նատրիումի քլորիդ, ներարկման ջուր:

Տետրակայինի դեղի արտաքին տեսքը և փաթեթվածքի պարունակությունը

Տետրակայինի ակնակաթիլներ դեղը անգույնից մինչև թեթև դեղնավուն գույնի թափանցիկ լուծույթ է:
Դեղի 10-ական միլիլիտր՝ պոլիէթիլենային սրվակ-կաթոցիկում: Յուրաքանչյուր սրվակ բժշկական կիրառման հրահանգի (ներդիր թերթիկ) հետ միասին տեղադրված է ստվարաթղթե տուփի մեջ:

Գրանցման հավաստագրի իրավատերը

«Լիկվոր» ՓԲԸ, Հայաստանի Հանրապետություն, 0089, Երևան, Քոչինյան 7/9

Արտադրող

LIQVOR® pharmaceuticals

«Լիկվոր» ՓԲԸ, Հայաստան,
0089, Երևան, Քոչինյան 7/9
Հեռ.՝ +37460 37 88 00
Էլ. փոստ՝ info@liqvor.com

Դեղի վերաբերյալ ցանկացած տեղեկություն ստանալու, ինչպես նաև բողոքների առկայության դեպքում պետք է դիմել գրանցման հավաստագրի իրավատիրոջ ներկայացուցչին կամ գրանցման հավաստագրի իրավատիրոջը:

Հայաստանի Հանրապետություն
0089, Երևան, Քոչինյան 7/9
Հեռ.՝ (37460) 37 88 00
Էլ. փոստ՝ info@liqvor.com

Ներդիր թերթիկի վերանայման ամսաթիվ՝ 31.07.2024, ՊՀ ԼՊ-№(006443)-(ՊԳ-ԱՄ)